դիւրին և հաճելի դարձնելու համար, վերջում աւելացրինք յատուկ անունների մի ցանկ ուսուցանասիրողի գործը դիւրացնելու համար։

Սոյն դիտողութիւններից յետոյ աւելորդ չենք դատում յիշել մի կարևոր պարագայ ևս։ Ճիշտ է, որ, ինչպէս ընթերցողը կը տեսնէ բուն իսկ հրատարակութեանս ընթացքում, մեզնից առաջ ուրիշներ արդէն ուշադրութիւն դարձրել են ձեռագրիս վրայ և օգտուել նրանից։ Դրանցից յիշատակելի են յատկապէս նախ պր. Խ. Լևոնեան, որ Աղթամարի կաթուղիկոսութեան պատմութիւնը գրելու համար արտագրել է «սոյն գրքիս կարևոր մասերը», և երկրորդը՝ Օրմանեան Սրբազան, որ, օգտուելով նրա յօդուածներից (Բիւզանդիոն, 1900), յաճախ յիշատակում է Հաւաքարանս իր «Ազգապատում»ի մէջ։ Այն ինչ որ պր. Լևոնեանին նուազ կարևոր թուելով զանց է առած նրա արտագրութիւնն ու հրատարակութիւնը, մեզ, եթէ ոչ պատմական զէթ այլ տեսակէտներով, նոյնքան կարևոր երևեցան որքան նրա արտագրած մասերը։ Տեսակէտների այդ զանազանութեան արդիւնքն է ներկայ ամբողջական հրատարակութիւնը։

Խօսքս չկնքած պարտք եմ համարում յայտնել, որ, գործիս տպագրութիւնն իմ բացակայութեան առթիւ տեղի ունենալով, սրբագրութիւնն անձամբ կատարել չկարողացայ և յանձնեցի պ. պ. Սարգիս Զ. Թօփալեանին և Դազրիկ Ներսիսեանին, որոնց սիրալիրութեան հանդէպ յայտնում եմ խորին շնորհակալութիւնս հրապարակով։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

1915 թ. Դեկտ. 24
Ս. Էջմիածին